

# Business Class

թիվ 7(11)  
Յոկտեմբեր 2008

## ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍ, ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱՌԱՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով երկրների պաշտոնական վիճակագրության, միջազգային կառույցների հրապարակումների և տնտեսության տարբեր ճյուղերը ներկայացնող ընկերությունների ղեկավարների շրջանում անցկացված հարցումների վրա՝ Համաշխարհային տնտեսական ֆորումը (ՉՏՖ) յուրաքանչյուր տարի հրապարակում է Մրցունակության համաշխարհային զեկույցը: Չորրորդ տարին անընդմեջ Հայաստանն ընդգրկվում է այդ զեկույցում: Հայաստանի վերաբերյալ տվյալները հավաքագրում և ներկայացնում է «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը:

Վերջին՝ 2008-2009 թթ. զեկույցում Հայաստանը զբաղեցրել է 97-րդ տեղը 134 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով հետընթաց (տե՛ս աղյուսակ 1): Իսկ ամենամրցունակ երկրներ են ճանաչվել ԱՄՆ-ը, Շվեյցարիան և Դանիան: Այդ երկրները գլխավորում էին մրցունակ երկրների ցանկը նաև նախորդ տարի:

Երկրի մրցունակությունը գնահատվում է 110 գործոնների հիման վրա, որոնք, իրենց հերթին, խմբավորվում են ըստ մրցունակության 12 հեռասյուների: Հայաստանը շարունակում է բարձր դիրք գրավել աշխատուժի շուկայի արդյունավետությամբ (45-րդ տեղ): Դրան նպաստել է գործատու-աշխատող հարաբերությունների ազատականացումն ու ճկունությունը: Աշխատանքային օրենսգրքով ավելի հստակ են սահմանազատվել իրավասություններն ու պարտավորությունները, սակայն, ընդհանուր առմամբ, աշխատանքային վեճերի լուծման մեխանիզմները դեռևս կատարելագործման կարիք ունեն:

Հայաստանն առավել վատ դիրք ունի գործարար կատարելագործվածության առումով (120-րդ տեղ): Սա ցույց է տալիս հայկական ընկերություններում գործարարության կառավարման ժամանակակից մեթոդների կիրառման ցածր մակարդակը:

Մեր հարևան երկրներից, որքան էլ ցավալի է, հետ ենք մնում այնպիսի ուղղություններում, ինչպիսիք են նորարարությունը (106-րդ տեղ), տեխնոլոգիական պատրաստվածությունը (112-րդ տեղ), միջնակարգ և բարձրագույն կրթությունը (94-րդ տեղ):

Ամենամեծ հետընթացը Հայաստանն արձանագրել է մակրոտնտեսական կայունության մասով (նախորդ տարվա 57-րդ տեղից նահանջել ենք 83-րդ տեղ): Մակրոտնտեսական կայունության գնահատման համար ՉՏՖ-ն առաջին հերթին կարևորում է բյուջեի պակասորդը, այնուհետև գնաճն ու տոկոսադրույքների փոփոխությունը: Այդ

մեթոդոլոգիայի պատճառով Հայաստանը զգալիորեն հետ է ընկել, ասենք, Ռուսաստանից (29-րդ տեղ) և Ադրբեջանից (45-րդ տեղ), որոնք ձևավորում են պրոֆիցիտային բյուջե, սակայն թույլ են տալիս գնաճի շատ ավելի բարձր մակարդակ: Մյուս կողմից, Հայաստանը 2008թ. ծրագրավորել է ՀՆԱ-ի 2,8% բյուջեի դեֆիցիտ, նախորդ տարվա 0,6%-ի համեմատ, ինչը միջազգային կառույցների կողմից նկատվել է որպես մակրոտնտեսական կայունության վատթարացում: Նշենք, որ հետազոտված 134 երկրներից 60-ում առկա են ոչդեֆիցիտային բյուջեներ, իսկ 21-ում այն շատ ցածր մակարդակ ունի (ՀՆԱ-ի 0,5%-ից պակաս):

Հայաստանում վերջին շրջանում լուրջ քայլեր են իրականացվում գիտելիքի վրա հիմնված ճյուղերը զարգացնելու ուղղությամբ: Անշուշտ, առաջընթաց կա, սակայն դա բավարար չէ անգամ տարածաշրջանային մասշտաբով մրցունակ լինելու համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն առայժմ չի գերազանցում ՀՆԱ-ի 2%-ը, իսկ մյուս ոլորտներում (բացի, թերևս, կապից) տեխնոլոգիական առաջընթացն ու նորարարության աստիճանը դեռևս բարձր չեն: Հայաստանի համեմատ Ադրբեջանի ավելի բարձր տեղին (մասնավորապես նորարարությամբ նրանք 40-րդ տեղում են՝ Հայաստանի 106-րդ տեղի համեմատ) նպաստում է այն հանգամանքը, որ այդ երկրում ձևավորվում են խոշոր կորպորացիաներ, որոնք ի վիճակի են մեծ ռեսուրսներ հատկացնել նորագույն տեխնոլոգիաներին ու հետազոտություններին:

Ինչ վերաբերում է բարձրագույն կրթության առումով Հայաստանի զբաղեցրած ցածր դիրքին (94-րդ տեղ), ապա դրա պատճառը, թերևս, բազմաթիվ բուհերի առկայության պայմաններում ոչ լիարժեք կրթության ապահովումն է և շրջանավարտների գործնական հմտությունների պակասը:

Նույն ուսումնասիրությունների շրջանակում, 100 ձեռնարկատերերի շրջանում անցկացված հարցումները պարզել են, որ Հայաստանում գործարարությանը ամենաշատը խոչընդոտում են կոռուպցիան (այդպես է պատասխանել հարցվածների 17,5%-ը) և հարկային քաղաքականությունը (15,7%-ը): Առաջին անգամ հայ գործարարները, որպես գործարարության խոչընդոտ, կարևորել են նաև արտարժույթի փոխարժեքը (10,3%): Որպես լուրջ խոչընդոտներ նշվել են նաև պետական անարդյունավետ վարչարարությունը, ֆինանսավորման աղբյուրների մատչելիությունը, ենթակառուցվածքների թերզարգացածությունը և սղաճը:

Անշուշտ, չի կարելի պնդել, որ Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի կամ ԱՊՀ մյուս պետությունների համեմատական առավելությունները Հայաստանին անհուսալի հետ են թողնում: Բոլոր այդ երկրներն էլ գտնվում են տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ փոփոխությունների փուլում: ՀՖԹ-ն տնտեսական զարգացվածության առումով երկրներին դասակարգում է ըստ 3 փուլերի (ռեսուրսների, արդյունավետության և նորարարության վրա հիմնված): Հայաստանը գտնվում է ռեսուրսների վրա հիմնված փուլից դեպի արդյունավետության վրա հիմնված փուլին անցման միջանկյալ շրջանում՝ Ադրբեջանի, Վրաստանի, Չինաստանի, Ղազախստանի, Հորդանանի հետ միասին: Այդ խմբում ընդգրկված են 1 շնչի հաշվով 2000-3000 դոլար ՀՆԱ ունեցող երկրները:

ՀՏՖ-ի հետազոտություններն ու արդյունքները փաստում են այն, ինչ վաղուց տեսանելի է անգնն աչքով: Հայկական ապրանքներից միջազգային շուկաներում մրցունակ կարելի է համարել միայն լեռնամետալուրգիայի, ադամանդագործության և պատրաստի սննդի ճյուղերի արտադրանքը: Դրանում համոզվելու համար բավարար է ուսումնասիրել Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած արտաքին առևտրի ապրանքային կազմը: 2008թ. հունվար-հունիս ամիսներին արտահանվել է մոտ 700 մլն

դրլարի ապրանք, որի 35%-ը ոչ թանկարժեք մետաղներն են, 15,7%-ը՝ հանքահումքային արտադրանքը, մոտավորապես նույնչափ՝ թանկարժեք մետաղները և պատրաստի սնունդը: Այս ճյուղերը կազմում են մեր արտահանման 82%-ը: Հայկական շուկայի մրցունակությունն առավել մեծ չափով հիմնվում է, այսպես կոչված, ազգային գործոնի վրա (հայկական կոնյակ, հայկական ջրեր, հայկական գորգեր և այլն): Ակնհայտ է, որ երկարատև հեռանկարում այս գործոնը մեզ համար մրցունակություն ապահովել չի կարող:

Վերջին՝ 2008-2009 թթ. զեկույցում Հայաստանը զբաղեցրել է 97-րդ տեղը 134 երկրների շարքում՝ նախորդ տարվա համեմատ արձանագրելով հետընթաց 4 տեղով:

### Հայաստանի արդյունքներն ըստ ՀԱՄ դիրքը ձևավորող 12 հենասյուների

	ՀԱՄ ցուցիչի ձևավորող 12 հենասյուները	ՄԳՁ 2008/09 Հայաստանի տեղը 134 երկրների մեջ	ՄԳՁ 2007/08 Հայաստանի տեղը 131 երկրների մեջ	Փոփոխությունը
1	Ինստիտուտներ	96	96	→ 0
2	Ենթակառույցներ	90	87	↘ -3
3	Մակրոտնտեսական կայունություն	83	57	↘ -26
4	Առողջապահություն և տարրական կրթություն	97	99	↗ +2
5	Միջնակարգ և բարձրագույն կրթություն և վերապատրաստում	94	95	↗ +1
6	Ապրանքների շուկայի արդյունավետություն	110	104	↘ -6
7	Աշխատուժի շուկայի արդյունավետություն	45	40	↘ -5
8	Ֆինանսական շուկայի կատարելագործվածություն	107	110	↗ +3
9	Տեխնոլոգիական պատրաստվածություն	112	104	↘ -8
10	Շուկայի չափ	111	111	→ 0
11	Գործարարության կատարելագործվածություն	120	115	↘ -5
12	Նորարարություն	106	94	↘ -12

### ԱՊՀ երկրների դիրքը ՀԱՄ աղյուսակում

ԱՊՀ երկրներ	ՀԱՄ 2008–09 Տեղ	ՀԱՄ 2007–08 Տեղ
Ռուսաստան	51	58
Ղազախստան	66	61
Ադրբեջան	69	66
Ուկրաինա	72	73
Վրաստան	90	90
Սուրբվա	95	97
Հայաստան	97	93
Տաջիկստան	116	117
Ղրղզստան	122	119

## Գործարարությանն առավելագույնս խոչընդոտող գործոնները Հայաստանում

